Հավելված 1

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում առկա խնդիրները և փոփոխությունների շրջանակը»

Օրը՝ 2019 թվականի հոկտեմբերի 18:

Վայրը՝ ԱԺ նիստերի դահլիճ (առավելագույնը՝ 150 նստատեղ):

Տևողությունը՝ 10:00-16:00 (ընդմիջում՝ 13:00-14:00):

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև հոկտեմբերի 17-ը՝ ժամը 12:00-ն՝ նամակ ուղարկելով hamazasp.danielyan@parliament.am էլեկտրոնային հասցեին կամ գրանցվելով լսումների մասին հայտարարության մեջ տեղ գտած համապատասխան հղումով:

Լսումների ընթացքում նախատեսվում են մի շարք ելույթներ և զեկույցներ 20 րոպե տևողությամբ: Յուրաքանչյուր զեկույցի կհաջորդի 20 րոպե տևողությամբ հարց ու պատասխան:

Բանախոսների զեկույցների շրջանակում կարծարծվեն հետևյալ թեմաները.

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի գնահատումը Հայաստանի միջազգային պարտավորությունների և լավագույն փորձի համատեքստում, կուսակցությունների և քարոզարշավի ֆինանսավորման առկա կարգավորումների հետ կապված խնդիրներ, վերահսկողական գործառույթներով օժտված լիազոր մարմնի գործունեության բարելավման հետ կապված հարցեր, կուսակցությունների ներքին ժողովրդավարության և ներառականության, քաղաքականության հետ կապված հիմնախնդիրներ և այլն:

Բացման խոսքով հանդես կգա Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:

Վերջին 1,5 ժամը կհատկացվի ելույթներին, հերթագրման գործընթացը կտևի լսումների սկզբից մինչև ընդմիջման ավարտը:

Հաշվի առնելով ելույթների համար հերթագրված անձանց թիվը և ելույթների համար սահմանված 90-րոպեանոց ժամանակահատվածը՝ լսումները վարողը կսահմանի ելույթների հնարավոր օպտիմալ ժամանակը:

Օրակարգը լսումներից առնվազն 3 օր առաջ կտեղադրվի Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ**